



## ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. բարեփոխումներին աջակցության ծառայություն

Funded by  
the European Union

enderEquality  
n Helpdesk

Իրականացման 04.01.2021 - 04.01.2024  
Ժամանակահատված:

### ԱԳ Երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա,  
Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 2 245 500

Ընդհանուր € 2 245 500  
բյուջե:

Իրականացնող կազմակերպություն(ներ):

NIRAS

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների  
հղումներ:  
[facebook.com/groups/642338200281272,](https://facebook.com/groups/642338200281272)

### Նախագծի

կայքէջ:

### Նախագծի

նկարագրություն

«ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. բարեփոխումներին աջակցության ծառայություն» ծրագիրը գենդերային վերլուծություն և կանանց ու տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ փորձագիտական խորհրդատվություն կտրամադրի տարբեր ոլորտներում, ինչպիսիք են աշխատաշուկայի քաղաքականությունը, տնտեսական զարգացումը, պետական կառավարումը, արդարադատության բարեփոխումները, առողջապահական և սոցիալական ծառայությունները, ինչպես նաև կրթությունը և ընտանեկան քաղաքականությունը: Ծրագրի նպատակն է բարձրացնել կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը՝ որոշումների կայացման ու բարեփոխումների, քաղաքականությունների և ծրագրերի իրականացման գործընթացներում գենդերային վերլուծության կիրառման միջոցով: Աջակցության ծառայությունը հիմնականում նախատեսված է ազգային կառավարությունների և պետական կառավարման մարմինների, ինչպես նաև տարածաշրջանում ԵՄ պատվիրակությունների և, ընդհանուր առմամբ, շահագրգիռ հանրության համար:

### Ակնկալվող արդյունքներ:

- Արևելյան հարևանության կառավարություններին և ԵՄ պատվիրակություններին տրամադրվել է փորձագիտական խորհրդատվություն՝ քաղաքականության մշակման և բարեփոխումների իրականացման գործընթացներում գենդերային վերլուծության ներառման վերաբերյալ.
- Բարեփոխումներում ներգրավված Արևելյան հարևանության կառավարությունների և ԵՄ պատվիրակությունների աշխատակիցները լավագույնս տեղեկացված են ներառական և կայուն զարգացման վրա գենդերային առումով զգայուն բարեփոխումների մասին և բարելավել են ապացուցահեն ու վերլուծական առումով հիմնավորված բարեփոխումների ներուժը.
- Արևելյան հարևանության երկրներում կանանց վրա բարեփոխումների ազդեցության մասին ապացույցային հիմքերը բարելավվել և համապատասխանաբար տարածվել են ընտրված թիրախային խմբերի վրա: